

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՊՆԻՔ ԱՌԻՅԱԿԵԱՅ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԱԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱԼ, ՀԱՅԱՍՏԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵՆԱԶԱՆԵԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՍՄԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅՔԻ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

www.freebooks.am

ԸՆԴՈՂՆԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆՎԱԼՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru



Պրոֆեսոր

Կ.Բազրառյան

ԳԻՄԱՀԱՐԴԱՐԱՆՔԻ
ԸՆՏՐԱՆԻ



Երևան, 1993

Պրոֆեսոր Կ.Բազրառյան

**ԴԻՄԱՀԱՐԴԱՐԱՆՔԻ
ԸՆՏՐԱՆԻ**

Երևան, 1993

«Հույս» հրատարակչություն
Երևան, 1993. Գ-ստիջ՝ 730.

Խմբագիր՝ Ն. Մելիքյան
Նկարիչ՝ Կ. Արզարյան

**Շարվածքը, էջադրումը և ձևավորումը «ԱՌԵՐԵՄՈՒՄ» - ԱՆԻ հրատարակչական համալիրի
Տպագրված է «Լուսինե-89» տպագրական-արտատրական կոոպերատիվում**

Տպարանակը՝ 10.000
Գինը՝ պայմանագրային

ՏՊԵՂ ԿԱՆԱՅՐ ՉԿԱՆ,
ԿԱ ՉՆԿԱՍՏՎԱԾ ՉԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ,
ԿԱՆ ԻՐԱՆՅ ՉՏԵՏԵՎՈՂ ԿԱՆԱՅՐ,
ՈՐ ԿՈՐՅՆՈՒՄ ԵՆ ՉԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ՏՐԱՊՈՒՅՐԸ

ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ ՀՄԱՅԻՉ

Ժպտա: Ճիշն ու չարությունը ոչնչացնում են վեղեցկությունը: Քո հմայքի երաշխիքը հանգիստ, բարյալկան հարաբերություններն են շրջապատողների հետ:

Շաքայթական մեկ օր կան երեկո նվիրիր քեզ. գնա վարսահարդարի կամ դիմահարդարի մոտ, ի վերջո սնուցող դիմակ դիր դեմքիդ ու պարանոցիդ: Մարմնիդ նկատմամբ խնամք տաձելու սովորություն մշակիր պատանեկան տարիներից: Այդժամ ցանկացած տարիքում հմայիչ կլինես:

Տնային հագուստիդ ոճը կոնկրետությունն է ու հարմարավետությունը: Այդ դեպքում մերձավորներդ կգնահատեն քո հիանալի տեսքը, իսկ դրանից էլ կբխի քո լավ արամադությունը:

Նմտորեն օգտվիր դիմահարդարանքից: Ոչ մի կին իրեն թույլ չպիտի տա սոնից դուրս գալ առանց դիմահարդարանքի: Բայց աստված մի արասցե, որ այն «ձչա»: Ցերեկը գունահարդարանքը պետք է լինի թեթև, բաց երանգներով, այսպես տարիքիցդ մեծ կերևաս: Նետևիր այս սկզբունքին. դեմքիդ վրա միաժամանակ ցայտունորեն մի ընդգծիր աչքերդ ու շուրթերդ: Շեշտը դիր մեկնումեկի վրա:

Նաշողությանդ կեսը սանրվածքդ է: Լինում է տարի, երբ նորաձև են համարվում թեթևակի ալիքավոր, բաց գույն մազերը, բայց չարժե կտրորեն հետևել նորաձևությանը: Սանրվածքդ պետք է համահունչ լինի դիմահարդարանքիդ, հագուստիդ, արտաքին տեսքիդ: ԵՎ մի բան էլ. հարկ է սքողել թերությունները և ընդգծել ամենայն լավը: Մի զլանա դրամ ծախսել վարսահարդարման համար. եթե մազերդ լավ են կտրված, ապա ամբողջ ամիս տեսքդ լավ կլինի:

Նետևիր մարմնիդ քաշին, զբոսնիր, մարմնամարզություն արա: Դա ձանձրալի է հնչում, բայց ի՞նչ անես. միայն ջանադրությամբ է հնարավոր ձեռք բերել թեթև քայլվածք ու վայելչագեղ կազմվածք:

Ավելի լավ է ուտես քիչ-քիչ, օրական հինգ անգամ. քան շատ՝ երեք անգամ: Քո գեղեցկության թշնամիներն են շաքարը, աղը, սուր համեմունքները, ոգելից խմիչքը: Բարեկամների թվում են բանջարեղենն ու միրգը, ամեն տեսակ կաթնամթերքը:

Ծրագրի վաղվա օրը. Դա կազատի ավելորդ հույզերից ու հոգսերից: Յերեկը ժամանակ գտիր 15 րոպե պառկելու կամ գոնե թուլացնելու մկաններդ՝ ընկողմանեքով բազկաթռչի մեջ:

Տնային գործերի մեջ ներգրավիր ամուսնուդ և երեխաներիդ: Միասին կատարած աշխատանքը կմսերմացնի ձեզ, և դու էլ չես հոգնի:

Մի մտածիր անհաջողություններիդ մասին: Դրանք ընդունիր հանգիստ ու հավատա, որ դրանք շոտով կփոխարինվեն հաջողություններով: Անձնատուր մի եղիր մեղսմաղձության: Կա աշուպխա կատակախորք. «Եթե տրամադրությունդ վատ է, քեզ համար նոր զգեստ կադիր, վախատեղի բնակարանիդ կսևալքը կամ էլ գոնե սանրվածքդ փոխիր»:

Այդ հմայիչ եղիր:

ՌԻԹՄԻԿ ՄԱՐՄՆԱՄԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Իսկ ինչ բան է ռիթմիկ մարմնամարզությունը:

Դա վարժությունների համակարգ է, որի դեպքում մարմնամարզական վարժությունները ռիթմիկ երաժշտությամբ անընդմեջ հաջորդում են միմյանց զուգակցվելով առանձին պարային բաղադրատարրերի հետ:

Շատերը, նայելով հեռուստացույցի էկրանին, կարծում են, թե դա ոչ միայն գեղեցիկ է, այլև դյուրին ու հասարակ: Մինչդեռ իրականում դա ֆիզիկական մեծ բեռնվածություն է: Իսկ ֆիզիկական մեծ բեռնվածությունները ավելի հեշտ են հաղթահարվում երաժշտության ներքո, բայց միայն հոգեբանորեն: Այդ պատճառով էլ առանձնակի զգուշություն է անհրաժեշտ: Նախքան ռիթմիկ մարմնամարզությամբ զբաղվելը անհրաժեշտ է խորհրդակցել բժշկի հետ: Շարժումներն էլ, ինչպես որ դեղը, հարկավոր է չափավորել:

Իսկ ինչպե՞ն գտնել այդ չափը:

— Սկզբում պետք է պարապել 20—30 րոպե և միայն առաժանաբար, մի քանի ամիս անց՝ 40—60 րոպե: Վարժությունների ցանկացած հասնվի պետք է կատարվի աշխատանքից հետո՝ դարձյալ նույն այդ ֆիզիկական լարվածության պատճառով: Բայց վարժությունների մի մասը կարելի է կատարել որպես առավոտյան մարմնամարզություն՝ ամեն օր 10—15 րոպե: Եվ երբեք չձգտեք միանգամից անցնել արագ



ժիթմի: Երաժշտությունը կարող է յուրօրինակ համանվագ լինել, և ամենևին էլ պարտադիր չէ ամեն մի սակաւ ուղեկցել շարժումով. չէ որ դուք դանդաղ պար եք կատարում արագ երաժշտության ներքո: Գտեք ձեզ մասշտիբի ու հարմար ընթացք:

— Ձեր հնարանվորությունները ոչ մի պարագայում չգերազանցելու համար մշտապես հետևելք ձեր գարկերակին: Ձեզ թույլատրելի երակազարկը կարող եք հաշվարկել հետևյալ բանաձևով. 200-ից հանած տարիքը: Օրինակ, եթե դուք 40 տարեկան եք, ապա թույլատրելի սահմանն է՝ $200 - 40 = 160$:

Բայց խոսքը վերջնաուսինս մասին է, այլ ոչ թե նորմալի: Առաջին շաբաթներին պարապունքներից հետո ձեր երակազարկը չպետք է մեկ յուպնում գերազանցի 120–130 գարկից. Ահա թե ինչու է անհրաժեշտ բժշկի հետ խորհրդակցելը պարապունքներին ձեռնամուխ լինելուց առաջ: Ձեր սրտի վիճակն ինչպիսին է: Կոլիմանա՞, արդյոք, լարվածությունը:

Իսկ հակացուցումներ կան

— Այն էլ ոչ թիչ: Դրանք գանազան հիվանդություններն են սրված վիճակում (մրսածություն, գրիպ, անգինա), սուրական հիվանդությունների (լեղապարկի բորբոքում, հաստ ազու բորբոքում, սուսնոքաբորբ, նշկաբորբ) սրումները, սրտաթոքային անբավարարությունը, սակավարյունությունը սրման աստիճանում, երիկամների սուրական հիվանդությունը և այլն:

Ի՞նչ գգևոտ հազնել պարապունքների ժամանակ:

— Նարմար է մարմնամարզական լողազգեստը կամ թեթև մարզագգեստը: Նաև հյուսեր բրդյա գանկապաններ, դրանք կօգնեն պահպանելու սրնքամկանները:

Ո՞ր տարիքից կարելի է գրազվել ժիթմիկ մարմնամարզությամբ: Ո՞վ կարող է վարել պարապունքները, և դրա համար ի՞նչ է հարկավոր.

— Կանխել է սկսել դպրոցական կրասեր տարիքից: Բայց ծանրաբեռնվածությունը, իհարկե, պետք է խիստ չափավորված լինի և ժամանակի, և շարժումների առումով: Որպեսզի պարապելը օգուտ սուս, անհրաժեշտ են և սուղ, և երաժշտական նվագակցություն: Վարժությունները կարելի է կատարել նաև հաշվումով, առանց երաժշտության, բայց դա անհետաքրքիր է ու, անհուզական:

Ամենալավ տարբերակն այն է, երբ խոսքը մարմնակրթանքի ու մարզույթի մասնագետ է ղեկավարում: Բայց պարապունքները կարող են անցկացնել նաև մասնագիտական պատրաստություն անցած մարզիկն ու մշակույթի աշխատողը:

Շատ երիտասարդներ են որոշել ժիթմիկ մարմնամարզությամբ պարապել, այն դիտելով

հեռուստատեսությամբ, բայց շուտով թողել են: Ինչպես որ ամեն մի գործ, ամեն տեսակ մարզանք, շիթմիկ մարմնամարզությունը եւ պահանջում է համբերություն:

Վարժությունները կատարելու համար հարմար է ցանկացած շիթմիկ երաժշտությունը: Եթե որոշել եք ինքնուրույն կազմել վարժությունների շարք, ապա հետևեք այսպիսի ուրվագծի.

1. Վարժություններ՝ ճիշտ կեցվածք ձևավորելու համար: Ուշադրություն դարձրեք գլխի, ուսերի, ձեռքերի պահվածքին ու դիրքին: Լավ է, եթե վարժությունները կատարվեն հայելու առջև:

2. Նստարակ վարժություններ՝ մկանների մեծ խմբերի համար (կռահող, ելման դիրք, ըայր, կրահատում, շրջադարձ և այլն) :

3. Վարժություններ՝ մկանների տարբեր խմբերի համար՝ մարմնի տարբեր մասերի մառնակցությամբ (ձեռքերի, մեջքի, որովայնի ճնշամկանների, ոտքերի):

4. Վազք, ցատկեր, պարաքայլեր:

5. Կարելի է կրկնել 3–րդ խմբի վարժությունները, բայց ավելի արագ տեմպով կամ բարդացնել դրանք:

6. Վազք, ցատկեր, պարաքայլեր (այլիներ՝ կրկնել):

7. Անենարարդ վարժությունները, այդ թվում՝ հաստակին նստած կամ պառկած վիճակում:


8. Վազք, ցատկեր, պարաքայլեր:

9. Մկանները թուլացնելու վարժություններ, շնչառական վարժություններ, կեցվածքի վարժություններ: Ռիթմիկ մարմնամարզությունը գեղեցիկ է, բայց և դժվար է: Ինչպես որ ամեն մի լուրջ գործում, այստեղ եւ մի վարձեր առաջ ընկնել:

ՄԱՐԶԱՆՔ ԴԵՄՔԻ ՀԱՄԱՐ

Մարզունքից առաջ լվացվեք օճառով կամ դեմքի մաշկը մաքրեք օծաթուրսով /լուխոն/ : Ոչ մի դեպքում ըստը / կրեմ / չօգտագործեք : Դա արվում է պարապմունքից ու կրկնակի լվայվելուց հետո, 5–7 թույլով սնուցիչ ըստը եւն ըստում խոնավ մաշկին: Ավելորդ խոնավությունը հանում եւն խավածով/անձեռացիկով/:

Բազկաթռում կամ այրոռին նստած հանգիստ, թուլացած դիրք ընդունեք: Նազուսաղ պետք է լինի ազատ, չկաշկանդի շարժումները: Սկզբնական շրջանում վարժությունները



կատարեր հայերու առջև, որը կօգնի ձեզ ավելի լավ յուրացնելու դրանք:

1. Տանգիստ և խորը ներշնչեր քթով, ռեզարթերը լսարվում են: Դանդաղ, համաչափ, բայց մինչև վերջ արտաշնչեր բերանով 2–3 անգամ՝ 3–4 վայրկյան միջնադադարով:

2. Խորը ներշնչեր քթով: Շունչը սրտեք, դեմքի ներքին մկանները լսարվում են, այլուցը հորդում է դեպի դեմքը: Չարտաշնչելով, փակ շուրթերով ուռեցրեք այտերը: 2–3 վայրկյան անց ուժգին ու լարուն արտաձողումներով օդը բաց թողեք բերանով: Դա կրկներ 2–3 անգամ:

3. Խորը ներշնչեր քթով, միաժամանակ ներս քաշելով այտերը: Մի փոքր՝ վայրկենաչափ պահելով շունչը, արտաշնչեր բերանով / դանդաղ, միաչափ / թեթևակի փակված շուրթերով, այտերը ուռցրած: Վարժությունն անրացնում է վերին շրթունքի մկանները, ինչն օգնում է հարթելու քթից դեպի շրթունքների անկյունները գնացող կնճիռները: 2 անգամ:

4. Աչքերի համար վարժություններն ավելի լավ է թողնել երեկոյան, երբ պետք է վերացնել հոգնածությունը: Մարմնամարզությունից 10 րոպե առաջ հանգստանալիս փակեք աչքերը: Կուպերին բորայթսփի մեկ սովորանոց լուծույթի, երիցուլի կամ սամիթի թուրմով սառը թրջոց դրեք: Այնուհետև անցեք վարժություններից: Գլուխը պահել անշարժ, իսկ աչքերով բոլորածն / պտտում / շարժումներ անել: Աչքերը վեր բարձրացնել և ուղղել աջ՝ դեպի վերին աջ անկյունը: Ապա իջեցնել դեպի ներքևի աջ անկյունը և դանդաղ սեղափոխել վերին ձախ անկյուն: Ապա նայել ուղիղ: Նորից բարձրացնել աչքերը մինչև վերջ՝ դեպի ձախ, և շարժումները կրկնել հակառակ կարգով: Աչքերը բարձրացնել վեր մինչև վերջ, ապա իջեցնել ներքև: Կրկնել 10 անգամ: Վերջում նայել՝ դեպի ձախ, ապա՝ աջ և նեկ անգամ էլ կրկնել աչքերով պտտաշարժումները:

5. Ձախ ձեռքով աջ այտը բռնեք այնպես, որ բթամատը հպվի այտի ներքին մասին՝ բերանի ներսից, իսկ մնացածները ընդգրկեն քթի թեղից դեպի շրթունքների անկյունները գնացող մաշկը: Ներշնչելով քթով, փորձեք ժպտալ: Այտի մկանները կտեղսվեն, իսկ ձեռքի մատները կխոչընդոտեն դրանց: Տանգուտի պահին մատները բաց են թողնվում: Վարժությունը հասկապես հանձնարարվում է նրանց, ում այտերի մկանները թորչում են, կախված և քթաշրթնային խոր կնճիռ ունեն: Օրական 2 անգամ աջ և ձախ կողմի համար:

6. Քթով ներշնչելիս լեզուն ուժեղ սեղաներ ստորին ծնոտին, աստանաշարից զգալիորեն ներքև, որից կրարվեն կզակի շրջանի ու պարանոցի մկանները: Արտաշնչել, մկանները թուրսնում են:

7. Ներշնչել քթով, փորձեք շուրթերն առաջ ձգել խողովակաձև: Երեքական մատներով բռնեք բերանի անկյունները: Տանգիստ արտաշնչեր բերանով: 4 անգամ:

8. Աջ ձեռքի մեջ առեք պարանոցի ձախ կեսը: Ձախ ձեռքի երեք մատը պահեք բերանի աջ անկյունում: Ներշնչեք բերանով: Սեղմված մկանները ներքև են ձգում բերանի ձախ անկյունը, այն դեպքում, երբ ձեռքը այն պահում է սեղում: Արտաշնչելիս մկանները թուլանում են, հանգիստ: Վարժությունը նպաստում է այտերի ու պարանոցի մկանների ամրացմանը: Նույն շարժումները անում են նաև դեմքի նյութ կեսի համար:

9. Կտրուկ ետ գցել գլուխը, թուլացնել ստորին ծնոսը, կիսաբացել բերանը, Պրկել ծնոսի շրջանի մկանները, ստորին ծնոսը դանդաղ, բայց ուժով բարձրացնել դեպի վերինը այնպես, որ ստորին շրթունքը ծածկի վերինը: Այս շարժումը կրկնեք այնքան, մինչև որ ցավ զգաք կզակի մկաններում: Շարժումների թիվն աստիճանաբար ավելացրեք, որպեսզի հետո անավստյան և երեկոյան դրանք կատարեք 5–6 րոպե:

10. Ցուցամատերով սեղմեք հոնքավերքի աղեղները: Չանացեք կծկել ճակատային մկանը, բարձրացնել հոնքերը, թեև մատները դրանք պահում են սեղում: 4 անգամ:

11. Երկու ձեռքի երեքական մատներ այնպես դրեք փակած կուպրի վրա, որ ցուցամատերը պահեն աչքերի արտաքին անկյունները, մատնենատները՝ աչքերի ներքին անկյունները, իսկ միջնամատները՝ հոնքերի մեջտեղը: Սատները պահելով նույն դիրքում, շանացեք կկոցել փակ աչքերը: 4 անգամ:

Մարզանքը եզրավակեք առաջին վարժությամբ:

ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇՐԹՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ահա շրթունքներով վարժությունների փոքր համալիր, որն ուղեկցվում է սովորական շնչառությամբ: Դրանց օգտակարությունը կզգաք անմիջապես:

1. Պինդ սեղմեք շրթունքները, փոքր–ինչ կտրացնելով դրանք խողովակաձև / առեւ դրանցով մատիտ եք պահում /: 1–2 րոպե դրանք սեղմեք առջևի ստամների, հասկապես ստորին շրթունքը: Դրանից հետո շրթունքները մի քանի վայրկյան թուլացրեք և նորից սեղմեք:

Սեղմելով շրթունքները, անմիջապես կզգաք, որ շնչելը դուրսացել է, օդն ավելի ազատ է անցնում քթով, իսկ շնչառությունը դառնում է ավելի խոր ու համաշափ:

Մրտային սակավարյունության / իշեմիկ / հիվանդությամբ, կրծքահեղձակով / ստենոկարդիա / տառապողների կարծիքով այս վարժությունը խիստ բարեխար է անդրադառնում իրենց վիճակի վրա՝ հեշտացնելով ֆիզիկական բեռնվածությունները



սանդուղքով կամ սարը բարձրանալիս, արագ քայլքը, վազքը:

2. Ձեռքի ավել սեղմեր կրծքին անրակից փոքր—ինչ ներքև և ձգեք ներքև: Շրթունքները սեղմեր ալնպես, ինչպես որ 1—ին վարժությունում: Շրթունքները սեղմելու պահին ենթանալիս մկանը կտրուկ կկծկվի և, բարձրանալով դեպի ստորին ծնոտը, հարկադրված կլինի հաղթահարել ավի դիմադրությունը, որն այն ձգում է ներքև: Այդ դիրքը պահպանեք 3—5 վայրկյան, ապա թուլացեք: Նորից սեղմեք շրթունքները:

Այս վարժությունը զգալիորեն բարձրացնում է նախորդի արդյունավետությունը, ամրապնդում պայտանոցի ենթանալիս մկանը, ուժեղացնում բրոնխների ուրդման /խոնավության հեռացման / գործառնությունը: Այն թույլ կտա պահպանել կրծքի, պարանոցի, դեմքի ստորին մասի մաշկաձածկույթների ձգությունը և դրանք պահպանել թորշոմելուց:

Վարժահանալիքը ձեզ կօգնի վերականգնելու թթով շնչելը: Իսկ դա շնչառական սուր վիրուսային վարակի հոտալի կանխարգելումն է:

Յուրաքանչյուր վարժություն օրվա ընթացքում կրկնել բազմիցս՝ 10—20 անգամ:

Նույնով են, որ գործի միջնադարների պահերին կատարվող մարզումները ձեզ կօգնեն:

ՄԱՐՉԱՆԵ ՊԱՐԱՆՈՅԻ ԵՒ ԿՉԱԿԻ ՀԱՄԱՐ



1. Մասներով իրար կցված ձեռքերը դնել ծոծրակին և գլուխը հետ գցել, այն պահելով ձեռքերով:

2. Ձեռքերը դնել կզակի սակ և իջեցնել գլուխը, պահելով ձեռքերով:

3. Փորի վրա պառկած, գլուխը հետ գցել հնարավորին չափ շատ և հետադարձել:

4. Ուսերը շարժելով, գլուխը դանդաղ շրջել աջ ու ձախ՝ 10 անգամ, հետո հնարավորին չափ հետ գցել և առաջ բերել, իջեցնել, նորից աջ ու ձախ, ապա գլուխը թափ տալ / ցնցել /:

5. Նստել ուղիղ, շտկելով ուսերը և բարձրացնելով գլուխը: Չանացեք կզակը հնարավորին չափ առաջ ցցել, այնպես, որ ստորին շրթունքը բառացիորեն ծածկի վերինը: Այդ դիրքում գլուխը 10—15 անգամ դանդաղ շրջել աջ—առաջ և ձախ—ետ:

Վարժությունները կարելի է կատարել աշխատավայրում, փողոցում, զբոսանքի

պահին:

Տենց որ սնաք սիայնակ, սի րանի անգամ անընդմեջ ուտերը բարձրացրեք սինչև ականջները և իջեցրեք: Ապա սաւերը հետ գցեք և հնարավորին չափ բարձրացրեք ծնուտը:

Մեր պարանոցին կենճիւներ հայտնվելու համար հաճախ սեղաւոր եւք ինքներս, ավելի ճիշտ՝ սեր կեցվածքը, չափից ավելի փափակ ու բարձր բարձի վրա ընելու, կզակը բռնեցրների վրա հենելու սովորությունը: Դրանում եւն յարեւում նաև կրկնակզակի առաջացման պատճառները: Ձանաւցեք, որ աշխատելիս, ըայելիս, կարգալիս կզակը և պարանոցը սղիղ ունկյուն կզգմեն: Գլուխը սիշտ պահեք ուղիղ, շատ հետ չգցելով: Խորիուրդ եւք սաղիս նաև կանոնաւոր կերպով կատարել ոչ բարդ վարժութիւններ, նման նրանց, որանց սիջացով ազատվեցինք արտանոցի կենճիւներից:

1. Գլուխը եռանդուն շրջել աջ, ապա ձախ, 10 անգամ:

2. Ստորին շրթունքով ծածկել վերինը, գլուխը ետ գցել հնարավորին չափ շատ և այդ դիրքում սնայ 10 վայրկյան, որից հետո վերադառնալ ելման դիրք, թուրացնելով սկանները, 5 անգամ:

3. Նստել ուղիղ, նայելով ուղիղ դիմացը: Ռոժգին պրկելով կզակի սկանները և, չնայած դիմադրութիւնը, փորձել գլուխը հնարավորին չափ հետ գցել 15-20 վայրկյանով: Տանգստանալ, սուպ կրկնել սի րանի անգամ:


Առաջարկում եւք ոչ բարդ սերտում երկու ձեռքի սնանների ծայրերը հպեք այտուսերերին, ականջների սնա, իսկ բթանաւամբ կարճ շարժումներով սի րանի թուպե լավ սերտեք կզակի սնաչը սնչստեղից դեպի ականջները:

Տիշեր, պարանոցը սովորաբար չեն շփում, չեն սրորում, այլ սիայն նրբորեն ու խնամքով շոյում եւն՝ շանարով չձգել սնաչը, ընդ որում դա սնում եւն վերից վար: Եղբան եւն ետից ու կողերից, սկսած սնազերի գծից դեպի ցած՝ ուստիողը: Առջեից պարանոցը շոյում եւն փոխնիվախ երկու ձեռքով՝ բարձր պահած կզակից դեպի կուրծքը:

Մերումից հետո դեմքը և պարանոցը լեյլեակի լվանալ առը ջրով և աւնպայման սնաչին սնուցիչ ըստը ըսել, այն գգուշորեն սնանախարեով սնանների ծայրերով:

ՎԻՏԱՄԻՆՆԵՐ

Բնութիւն սնչ կենսաբանորեն ակտիւ նյութերի սի ստվար



զանգված այս կամ այն կերպ ներգործում է օրգանիզմի վրա:

Բնությանը այդ բանկարժեր արգասիքների գանձարան է: Գրանց հնուտ կիրառման դեպքում շատ բանի կարելի է հասնել:

Նախ և առաջ անհրաժեշտ է խնամալ որ վիտամինները կենսաբանորեն սկսիվ նյութեր են, որոնք մասնակցում են օրգանիզմի փոխանակային շատ հարընթացների, և դրանց պակասն օրգանիզմում կարող է հանգեցնել բազմապիսի կերպով խտրությունների:

Օրգանիզմում այս կամ այն վիտամինի բացակայությունը՝ ամփոփում է ինչպես նաև այդ վիտամինների պակասը՝ հիպովիտամինոզը, կարող են լուրջ հիվանդությունների պատճառ համդրանալ: Բայց և վիտամինով կամ վիտամիններով օրգանիզմի շտիկի ավելի հագեցումն էլ կարող է զանազան ավստրանակաճ փոփոխությունների պատճառ լինել:

Անեն դեպքում օրգանիզմի մաշկածածկույթների վիճակը, այլ գործոններից բացի, մեծապես կախված է ընդհանրապես օրգանիզմում և մասնավորապես մաշկածածկույթներում վիտամինային ճիշտ փոխանակությունից:

Ա ՎԻՏԱՄԻՆԸ հայտնի է **ԿԱՐՈՏԻՆ** անվանը:

Այս վիտամինը կանխապահպանում է ակնացանցեղու / աչքի զանցաթաղանթի / հիվանդությունից, կանոնավորում մարտդական օրգանների գործողությունը, հաշտագատման հարընթացներն ու մաշկի եղջրագոյացումը, բարերար ազդեցություն ունենում մաշկի վերականգնման վրա:

Օրգանիզմում այդ վիտամինի պակասի դեպքում նկատվում է մաշկի չորություն ու թեփստում, մազերը կորցնում են փայլն ու դառնում ջարդվող, եղունկները՝ փափուկ, վերքերը դժվար են ապաքինվում:

Ա վիտամին են պարունակում գազարը, թլիկը, ձվի դեղնուցը, կարագը, սուսլարի ու խոզի ըստը, ձկան յուղը, պանիրը, կաթը, ունը, յոթին, կանաչ դոթը, բալը, նարինջը, ծիրանը:

Ե խմբի վիտամինները կանխապահովան են նյարդային հյուծվածությունից, մկանների թորացումից, այտուցների գորացումից, մաշկի կարմրելուց ու թեփոսելուց, բեթանի անկյուններում ճաքեր առաջանալուց, սնգարից / միգրեն /, ընկճվածությունից, հոգնածությունից, մագաթափությունից: Այդ վիտամինների պակասի դեպքում մարդը կորցնում է անորժակը, առաջանում են սրտի, ըստրի սնական հիվանդություններ, զանազան նյարդախանգարումներ / ներուզներ /, մաշկային հիվանդություններ, սակավարյունություն:

Ե վիտամին են պարունակում խմորիչները, սարեկանի հացը, վարսակի խշուկները, կարտոֆիլը, կանաչ դոթը, յոթին, սև սաթրաչիրը, ընկույզը, կաթը, գունավոր կաղամբը, ձկան յուղը, խոզի միսը, թլիկը,

լարող:

D խմբի վիտամինները նախապահպանում են մազաթափությանից, ատամները թափվելուց, ատամնարձնի / ատամների էմալի / քայքայումից: Այդ խմբի վիտամիններ են պարունակում կաթնամթերքները, ձվի սպիտակուցը, խմորիչները, ձուկն ու ձկնաչուղը:

E վիտամինը մասնակցում է սեռական համակարգի գործունեության և դաշտանային գործառնության կարգավորմանը: Օրգանիզմում E վիտամինի պակասը մաշկի ծերացման պատճառ է դառնում, նվազեցնում մտավոր ու ֆիզիկական աշխատունակությունը:

Այդ վիտամինը պարունակվում է կաղամբի, կաթի, ցորենի հացի, գետնընկույզի /արախիս/, պատիճավոր սաքոդեղի, ձվի դեղնուցի մեջ:

ԱՌՈՂՋԱՊԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՊՈՒՐԻՉ ԼՈՓԱՆՔՆԵՐ


Ժամանակակից բժշկության մեջ լայնորեն է կիրառվում ջրաբուժությունը. Տարբերում են զանազան աղախառնուրդներ պարունակող սովորական ջրով լոգանքներ, զազալոգանքներ, հանքազազային, ծովային, փշատերևով լոգանքներ և ցեխալոգանքներ: Օգտակար են սառբեր խոտաբույսերով լոգանքները:

Խառնուրդալոգանքները լինում են բուժական և առողջապահական (հիգիենիկ), կազդուրիչ: Վերջիններս նախատեսվում են նյութափոխանակության բարելավման, օրգանիզմի ընդհանուր կորսվի բարձրացման համար և ցուցված են առողջ մարդկանց:

Ջանազանում են խոտաբույսերով սառը /20 աստիճանից ցածր/ , հով /20–30%, գոլ/32–38°/ և սաք լոգանքներ:

Բուժարարողության ակտիվությունը չպետք է գերազանցի 20–25 րոպեից: Դրանից հետո մարմնին կպած խոտաբույսերի մասնիկները կարելի է լվանալ ցեցուղով: Կազդուրիչ լոգանքներից հետո օձառ չպետք է օգտագործել:

Խոտալոգանքի նախապատրաստվելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ խոտաբույսերի օգտագործման չափաբաժինը մոտավորապես հետևյալն է. 2.5–3 կգ թարմ կամ 500–600 գրամ չորացրած ու մանրացրած հումք: Ընդ որում օգտագործում են բույսի բոլոր, այդ թվում և կոշտ, ոչ պիտանի մասերը: Կարելի է օգտագործել ճյուղիկներն ու ոստիկները, մատղաշ բները, կեպուր և արմատները այն թիփերի ու ծառերի.



որոնք կիրառվում են բժշկության մեջ (փշարմավ, ուեեցի, բռնչի, մորի, մասրեցի, կեչի, հաղարջ և այլն):

Բույսը կարելի է մանրացնել, լցնել լոգարանի մեջ և վրան ջուր լցնել: Կարելի է եփուկ պատրաստել մանրացված չոր կամ թարմ խոտաբույսի վրա 8–10 փար ջուր լցնել և մարմանը կրակի վրա հասցնել եռման, թրմել մոտ մեկ ժամ, քամել, լցնել լոգարանի մեջ և ջուրն ավելացնել:

Առողջապահական ու կազդուրիչ ներգործություն են ունենում ջրի մեջ ավելացվող տարբեր նյութերը: Նախքան որոշելը, թե ձեզ ինչն է հարմար, օգտակար է փորձել տարբեր միջոցներ, անհրաժեշտության դեպքում նախապես խորհրդակցելով բժկի հետ:

Բավական է ունենալ ընդամենը մի քանի տեսակի բույսերի՝ երիցուկի, ձիաձեստի, եղնչի, ճնճղապաշարի / մատիտեղ /, կատվալեզվի համեստ պաշար: Բայց եթե հնարավորություն կա, ապա կարելի է կազմել նաև հատուկ, այսպես ասած, անհատական բուսախառնուրդներ:

Բերենք մի քանի փորձված դեղատոմս:

Ա/ Խնկածաղիկ սովորական /խոտաբույսը/ 1 մաս, եղինջ երկտուն /տերևներն ու ցողունը/ 5 մաս, երիցուկ հոսավետ / խոտաբույսը / 3 մաս, սև հաղարջ / ճյուղիկները, տերևները / 2 մաս, ուրց / խոտաբույսը / 2 մաս, կատվալեզու / խոտաբույսը / 5 մաս:

Բ/ Կեչի / ուտիկները, տերևները / 4, երեքնուկ մարգագետնային / վերգետնյա մասը / 4, երիցուկ դեղագործական / խոտաբույսը / 4, մորի / ուտիկները, տերևները / 4, անանուխ դաշտային կամ պղպեղադաղձ / խոտաբույսը / 5 մաս:

Գ/ Կեչի / ճյուղերը, տերևները / 3, խնկածաղիկ սովորական / խոտաբույսը / 5, մատուցի / խոտաբույսը / 5, կատվալեզու եռատերև / խոտաբույսը / 5 մաս:

Դ/ Սեզ սողացող / վերնամասը և խոտաբույսը / 5, երիցուկ հոսավետ / խոտաբույսը / 6, սև հաղարջ / ուտիկներն ու տերևները / 5, ուրց / խոտաբույսը / 2 մաս:

Ե/ Խնկածաղիկ սովորական / խոտաբույսը / 2, եղինջ երկտուն / տերևները / 5, երիցուկ հոսավետ / խոտաբույսը / 4, ճնճղապաշար / մատիտեղ՝ խոտաբույսը / 3, ձիաձեստ, դաշտային / խոտաբույսը / 4, ուրց / խոտաբույսը / 4, կատվալեզու / խոտաբույսը / 4 մաս:

Չ/ Երիցուկ հոսավետ / խոտաբույսը / 4, փշարմավ / ճյուղերը, տերևները / 5, բռնչի / ճյուղերը / 3, ճնճղապաշար / մատիտեղ, խոտաբույսը / 3, ձիաձեստ դաշտային / խոտաբույսը / 3, մայրի, եղևնի, կվեցի կամ սոճի / փշատերևը, փոքր ճյուղաթաթերը / 12 մաս:

Է/ Խնկածաղիկ սովորական / խոտաբույսը / 3, եղինջ երկտուն / խոտաբույսը / 4, առյուծագի

/ խոտաբույսը / ` 5. երիցուկ հոտավետ / խոտաբույսը / ` 5. ճնճղապաշար / մասիտեղ՝ խոտաբույսը / ` 5, գայլուկ սովորական / կոները / ` 4 մաս:

Կան նաև ավելի պարզ դեղատոմսեր, որոնց դեպքում բոլոր բույսերից վերցնում են հավասար չափով: Ահա դրանցից երկուսը.

ա/ Կեչի / ճյուղիկները, տերևները /, եղինջ երկտուն / խոտաբույսը /, կուստուկ մեծ / վերնամասը, մատղաշ տերևները/. վարսակ / ծաղկած բույսը/. խատուտիկ / ամբողջ բույսը /. կատվալեզու / խոտաբույսը /, խնկածաղիկ / խոտաբույսը /:

բ/ Սեզ սողացող / վերնարմասը /, երիցուկ հոտավետ / խոտաբույսը /. առյուծազի / խոտաբույսը /, ուրց / խոտաբույսը /:

Կարելի է վերցնել նաև պարզապես մի փունջ խոտ ու դրանով հիանալի լողաչուր պատրաստել ու լոզանք ընդունել:

Աղաշրով լոզանքը / 250—500 գ ծովային աղ կամ 500 գ սեղանի աղ / հանգստացնում է նյարդային համակարգը, մաշկը դարձնում առածական. խթանող ու կազդուրող ազդեցություն ունենում:

Սոճու հյութահանուկով / հյութանզված / լոզանքն ամրապնդում է նյարդային համակարգը. ոչ միայն վերացնում է հոգնածությունը, այլև նպաստում օրգանիզմի վերականգնմանը լարված մտավոր աշխատանքից հետո: Առավել օգտակար է եթե լողաչրի ջերմությունը 35 աստիճան է:

Ցորենի թեփով կամ վարսակի ձավարով լոզանքը վերացնում է մաշկի գրգռվելը, թեփոսելն ու կարմրելը: Այն պատրաստելու համար վերցրեք 250 գ ցորենի թեփ կամ վարսակի ձավար, լցրեք թանգիՖե սոսյրակի՝ մեջ ու կախեք ծորակի տակ այնպես, որ ջուրը անցնի այդ սոսյրակի միջով: Նման բուժալոզանքն ընդունում են մոտ 10—15 րոպե: Ջուրը շատ տաք չպետք է լինի: Այդ լոզանքից հետո խորհուրդ չի սրվում լվանալ մաշկը. պետք է սպասել. մինչև որ մարմինը չորանա: Չմոռալու համար պետք է լինել տաք սենյակում:

Քացախի խառնուրդով լոզանքը օգտակար է մաշկի վրա ունեցած հիանալի ազդեցությամբ, նեղացնում է լայնացած ծակոտիները: Մեկ լոզանքի համար վերցվում է մեկ լիտր քացախ:

Որոշ մասնագետների կարծիքով մեկ լոզանքի համար բավական է 250 գ խոտաբույսը: Ավելի լավ է թունդ եփուկ պատրաստել իսկ հետո լցնել ջրի մեջ:

Երիցուկը դադարեցնում է շղակծկումները, նպաստում բորբոքիչ երևույթների վերացմանը: Այն լավ է ազդում մաշկի զանազան ցաների դեպքում: Երիցուկի թունդ լուծույթը վերացնում է քորը, հանգստացնում ցավը:

Նագրելվարողը / խնկունի / աշխուժացնում է սրտի գործունեությունն ու արյան շրջանառույ՝ նը, ոչնչացնում նյութափոխանակության արգասիքները: Նագրելվարողի լուծույթով դեմքը լվանալիս կենտրոնները հարթվում են:

Նագրաբաստերուկը ուժեղացնում է արնաշրջանառությունը, լավացնում սրտի աշխատանքը:

Անանուխը օգնում է ստամոքսի և լեղապարկի կծկանքների դեպքում: Նրա սուր հոտը գրգռիչ ներգործություն է ունենում:

Եղեսպակը նեղացնում է ծակոտիները: Եթե տառապում եք ծակոտիների լայնացումով, ապա օգտակար է շաբաթական երկու-երեք անգամ լոզանք ընդունել եղեսպակի եփուկով:

Սառը լոզանքը / ջրի ջերմաստիճանը 25-30 / հյուսվածքները դարձնում է ավելի առաձգական: Բավական է նման լոզաջրում պահել 2-3 թուպե, որից հետո լավ է կանգնել ուժեղ ցնցուղի տակ: Եթե մարմինը շատ է տաք, լոզանքից առաջ պետք է մի քիչ պաղեցնել այն: Բայց նախքան նման լոզանք ընդունելը անհրաժեշտ է խորհրդակցել բժշկի հետ, քանի որ այն հակացուցված է շատ հիվանդությունների դեպքում:


Գլիցերինով լոզանքը փափկացնում է չափից ավելի չոր մաշկը, կենդանացնում հյուսվածքները: Մեկ լոզանքի համար պետք է վերցնել 0.5 լ գլիցերին: Ջրի ջերմությունը պետք է լինի 37 աստիճան:

Անհրաժեշտ է նկատի առնել հետևյալ հանգամանքը: Նախ, չի կարելի մոռանալ, որ եթե դուք ամբողջությամբ պոկեք ձեզ հարկավոր խոտաբույսը, ապա այն կվերականգնվի սուկ մի քանի տարի հետո, և այն էլ, եթե այդ տեղը չգբաղեցնեն որիշ բույսեր:

Նարկ է հիշել, որ բուսախառնուրդով լողաշրերի բաղադրության մեջ դեղաբույսեր են մտնում: Ու յեւեւ սվյալ դեպքում դրանք չեն անցնում օրգանիզմ, այդուհանդերձ, ինչ որ-չափով ունենում են իրենց ազդեցությունը: Այդ իսկ պատճառով հարկ է զգուշորեն վերաբերվել անգամ նման լոզանքներին, վերլուծել դրանց ազդեցությունը:

ՄԱՋԵՐԻ ԽՆԱՄԲԸ

Խիտ, փսրթամ ու փափուկ, հաճելի երանգով փայլող վարսերը ամեն
• մի կնոջ երազանքն են: Գեղեցիկ մազերն, անշուշտ, ամենից առաջ լավ



առողջության, լիարժեք սննդի, չափավոր ապրելակերպի արդյունք են, բայց և ճիշտ խնամքն էլ վերջին դերը չի խաղում: Եվ դրա շնորհիվ կարելի է շատ բանի հասնել:

Մազերի խնամքի առաջին պայմանը մաքրությունն է: Թե ի՞նչ հաճախակցությամբ է պետք լվանալ գլուխը, կախված է մազերի տեսակից, տարվա եղանակից, աշխատանքի պայմաններից: Մի խոսքով, մազերը պետք է լվանալ ոչ թե յոթ կամ տաս օրը մեկ, այլ հենց որ սկսվում են կեղտոտվել:

Մազերը լվանալուց առաջ ասնրեք խոզանակով: Մեր սուսերը մազերը լավ լվանալու համար սովորաբար օգտագործում էին անձրևի կամ ձյան ջուրը: Բնապահպանական աղետների մեր ժամանակներում դա չպետք է անել: Ավելի լավ է ջրմուղի կոշտ ջրին փափկացնելու համար ավելացնել մի քիչ բորակ կամ խմելու սոդա / մեկ լիտր ջրին մոտավորապես մեկ թեյի գդալ / : Ջուրը պետք է սոսք լինի: Սկզբում պարզապես պետք է թրջել գլուխը: Օձառահեղուկը / շամպունը / բացել ջրով, քսել մազերին և գլխամաշկը սոսքերը մերսման շարժումներով, քիչ-քիչ ջուր ավելացրեք, մինչև փրփրելը: Եթե մազերը շատ կեղտոտ չեն, ապա երկրորդ անգամ օձառահեղուկ քսելու կարիք չկա: Նստո մազերը խնամքով պարզաջրում են և ցուղաքսուք շաղ սուպիս: 2-3 րոպե անց այն լվանում են: Վերջին պարզաջրման համար խորհուրդ ենք տալիս օգտագործել սառը ջուր:

Եթե ձեռքի սակ ցողաքսուք չկա, ապա ջրի մեջ ավելացնում են մեկ կիտրոնի հյութ կամ մեկ ճաշի գդալ քացախ մեկ լիտր ջրին: Մազերը պարզաջրելու / ողողելու / համար կարելի է օգտագործել նաև կեռու տերևներով կամ երիցուկի ծաղիկներով պատրաստված թրմեր, մեկ ճաշի գդալ մանրացված չոր հումքի վրա լցնում են 1 բաժակ եռման ջուր, թրմում մինչև հովանալը, իսկ ապա քսում: Ովքեր սառապում են մաշկի բարձր ճարպագատմամբ, նրանք պետք է լվանալուց հետո մազերը ողողեն ձիաձետի, անանուխի, կաղնու կեղևի թրմով:

Մազերը լվանալուց հետո խնամքով ցամաքեցնում են խավոտ սրբիչով և չորացնում բաց օդում:

Չոր մազերը կամ սխալ խնամքի հետևանքով գերչորացած մազերը առանձնահատուկ մաքրություն են պահանջում: Լավ արդյունք են տալիս բուսական բուժախառնուրդներով ներմերսումներն ու սնուցիչ թրջոցները:

Մազերը լավ է ամրացնում և դրանց աճը բարելավում հետևյալ բուսախառնուրդի թուրմը, հավասար մասերով իրար խառնեք եզան լեզվի, երիցուկի, եղեսպակի, եղնջի, խնկածաղկի փշրվածքը: Մեկ ճաշի գդալ բուսախառնուրդի վրա լցրեք մի բաժակ եռման ջուր, թրմեք մեկ ժամ և քսեք: Թրմին ավելացրեք սարեկանի / աշորայի / հացի միջուկ, մինչև որ այն վերածվի խյուսի: Տաք խառնուրդը ներմերսում են

զվսի մաշկի մեջ, գլուխը ծածկում պողիէթիլենե գլխարկով և այդպէս թողնում են մեկ-երկու ժամ: Ապա մազերը ողողում են սուք ջրով՝ առանց օձառի, և չորացնում բաց օդում:

Մազերի ամրացման համար կարելի է խառնուրդ պատրաստել կաղնու կեղևի և գլուխ սոխի կճեպի հավասար մասերից: Մի բաժակ խառնուրդի վրա լցնում են մեկ լիտր եռման ջուր և պահում մարմանդ կրակի վրա: Տաք եփուկը ներմերսում են գլխի մաշկի մեջ:

Շատ արդյունավետ են հետևյալ բուսականները.

ա / 1 մաս խնկեղեգի վերնարմատ, 1 մաս կռասուկի վերնարմատ կամ տերևներ, 4 մաս գայլուկի կոճեր, 6 ճաշի գդալ խառնուրդը եփում են մեկ լիտր ջրում.

բ / ուռենու կեղևը և կռասուկի արմատները իրար են խառնում հավասար համամասնությամբ, 4 ճաշի գդալ խառնուրդը եփում են մեկ լիտր ջրում.

գ / 2 մաս ցախի խոտաբույս, 2 մաս եղևնջ, 2 մաս կռասուկ և 1 մաս գայլուկի կոճեր, 7 ճաշի գդալ խառնուրդը եփում են մեկ լիտր ջրում.

դ / եղևնջի և սուսարակի տերևների հավասար չափով խառնուրդից վերցնում են 6 ճաշի գդալ և եփում մեկ լիտր ջրում.

ե / 4:4:3 հարաբերությամբ վերցնում են կռասուկի, նարգիզի և գայլուկի 5 ճաշի գդալ խառնուրդ և եփում մեկ լիտր ջրում:

Այդ եփուկները պետք է գլխի մաշկի մեջ ներմերսել շաբաթական 2-3 անգամ:

Մազաթափությունը կանխում է կեղծ դանձլամերի / ջրքի / օծաթուրմը / լուխոնը /, որը պատրաստում են այսպես, բույսի 100 գ արմատը եփում են կես լիտր քացախի մեջ այնքան, մինչև որ մնա ծավալի կեսը: Պաղած եփուկը քանում են: Մեկ ժամ սառը ջրում պահում են սուղտի արմատները / 50 գ արմատ 1/2 բաժակ ջրին /: Ապա սուղտի թուրմը քանում են, երկու հեղուկները խառնում են իրար: Մասցված օծաթուրմը առավոտյան ու երեկոյան գլխի մաշկի մեջ են մերսում, մեկ ամիս շարունակ:

Մազերի աճը խթանում է բաղեղի տերևների եփուկը: Այն պատրաստելու համար կարտված տերևներից մի ճաշի գդալ պետք է 10 թուփե եփել կես լիտր ջրում: Պաղած եփուկը քանել: Դրանով ամեն երեկո թրջել գլուխը, մեկ ամիս շարունակ:

Չոր, փշրվող մազերի դեպքում բուժական լավ արդյունք է տալիս հնդկուսենի, եղևնջի տերևների և մատնուճու արմատների թուրմի օգտագործումը, 100 գ լավ մանրացված հնդկուսենի տերևները խառնել 100 գ եղևնջի մանրացված տերևների հետ և ավերացնել մատնուճու 10 գ ծեծված արմատ: Խառնուրդի վրա

լցնում են կես լիտր օդի և թրմում 15 օր. օրական մի քանի անգամ թափահարելով: Գլուխը լվանալուց հետո քանձված թուրմը ներմերսում են սնաչկի մեջ:

Լավ բուժամիջոց է երիժնակի եփուկը. 20 գ կտրտված երիժնակը 5 րոպե եփում են կես լիտր ջրում: Պաղեցված ու քանձված եփուկով մերսում են գլխասնաչկը, ապա մազերը ողողում սովորական ջրով: Խորհուրդ է տրվում եփուկով մերսումներ անել շաբաթական երեք անգամ, երկու ամիս շարունակ:

Չոր և փշրվող մազերի դեպքում խորհուրդ է տրվում ամիսը մեկ գեյթոնի ձեթով մերսաթրջոց դնել: Դրա համար փաթեթ պղնձի մեջ մի քիչ ձեթ են լցնում և այն դնում տաք ջրով մեծ թասի մեջ: Լավ է մեկ թեյի գդալ կիտրոնի հյութ լցնել ձեթի վրա: Մինչև Ֆեյսիասի 40—50 աստիճան տաքացրած ձեթը մերսում են գլխի սնաչկի մեջ. գլուխը ծածկում յուրազիտով և փաթաթում տաք, խափափոր սրբիչով: Թրջոցը պահել 1—2 ժամ: Օգտակար է նաև մեկ ճաշի գդալ գերչակի ձեթով լավ հարված ձվի դեղնուցով թրջոցը: Այդ սիջոցն արդյունավետ է նաև գլխի թեփառության դեմ: Մերսաթրջոցը կարելի է պատրաստել գերչակի և գեյթոնի ձեթի և օճառահեղուկի / շամպուն / խառնուրդից: Վերցնում են ձեթի յուրաքանչյուր տեսակից երկուական մաս և մեկ մաս օճառահեղուկ: Մերսաթրջոցը թողնել կես ժամից մինչև մեկ ժամ: Պակաս արդյունավետ չէ նաև խոտաբույսերի ձեթախառնուրդը: Մի բուռ չորացած կամ մանրացված թարմ դեղաբույսերի վրա սպիտակ երեքնուկի, երիցուկի, հնդկալենի, սրսիակնդի · արևբուրիկ / ծաղիկներ, եղնջի ու կեչու տերևներ · լցրել կես բաժակ ցանկացած ձեթ: Խառնուրդը թրմել լավ փակված ապակե ամանում մեկ շաբաթ: Օգտագործելուց առաջ քանել, մի քիչ տաքացրել և քսել մազերին լվանալուց առջև կես ժամ առաջ:

Մազերի բնական փայլը, առանձականությանը կարող է վերականգնել հետևյալ բաղադրությամբ խառնուրդը. 1/2 բաժակ ձեթ, 1/2 թեյի գդալ բրդաճարպ / լանոլին /, 1 թեյի գդալ երիցուկի ծաղիկներ, 1 գդալ եղնջի տերև, 1 գդալ կեչու տերև, 1 գդալ մանուշակ եռագույն / հիթ, գառ—մանուշակ /, 1 ձվի դեղնուց և 1 թեյի գդալ կիտրոնահյութ: Ձեթը բրդաճարպի հետ սաքացրել գոլորշիով, ավելացրել մանրացված բուսախառնուրդը և եռացրել 30 րոպե: Ապա խառնուրդը քանել, թեթևակի պաղեցրել, խառնել հարված դեղնուցի և կիտրոնահյութի հետ: Տաք սնուցիչ խառնուրդը լվանալուց մեկ ժամ առաջ քսել մազերին, հատկապես ծայրերին:

Մազերը պետք է ամեն օր սանրել հասուկ խոզանակով: Ինչքան հաճախ և շատ սանրել ձեթ մազերը, այնքան դա բարենպաստ կանդրադառնա ոչ միայն սանրվածքի, այլև մազերի ամրոջ կառուցվածքի ընդհանուր վիճակի վրա:

Եթե մազերը շատ չոր են, ապա լվանալուց առաջ դրանց պետք է քսել 6–8 կաթիլ գերչակի ձեթի ու սի թեյի գդալ ռամի հետ հարված մեկ ձվի դեղնուց: Այդ խառնուրդը պետք է մերսել մազարմատներին: Ապա պետք է գլուխը կապել գլխաշորով և երկու ժամ անց լվանալ փոքր–ինչ տաք ջրով՝ օձառահեղուկով:

Եթե խառնուրդ՝ պատրաստելու համար քիչ ժամանակ ունեք, ապա այն կարելի է փոխարինել պարզապես ձվի դեղնուցով: Երկու դեղնուցը բավական է գլուխը այնպես լավ լվանալու համար, ինչպես ասենարավ օձառով կամ օձառաշրով: Չվի դեղնուցը հիսանալի « սևուկ » է գլխամաշկի ու մազերի համար և դրանք չի չորացնում:

Գլուխը լվանալուց հետո շատ օգտակար է մազերը ողողել խոտաբույսերի եփուկով, որը պետք է պատրաստել նախօրոք: Դրա համար վերցրեք սի–սի պտղունց եղինջ, գայլուկի կոն, երխցուկ, հազարատերևուկ, սրտիկուկ / արևբուրիկ /, դրանց վրա լցրեք մեկ լիտր եռացրած ջուր և հասցրեք եռման: Կրակի վրայից վերցնելով, պահեցրեք: Մազերը ողողեք խոտաբույսերի այդ եփուկով և սի սրբեք, այլ սրբիչը զցեք ձեր ուսերին և թողեք, որ մազերն իրենք իրենց չորանան: Եթե շտապում եք, մազերը կարող եք չորացնել ֆենով:

Անկախ այն բանից, ձեր մաշկը չոր է, թե ճարպոտ, ամեն երեկո գլխի չոր մերսում արեք մատների ծայրերով շարժելով մաշկը, բայց չքրտելով ու չքրծելով այն եղունգներով: Մերսումից հետո խոզանակով մազերը տանրեք բոլոր ուղղություններով, գլուխը հակելով ներքև: Գլխի մերսումը և մազերը սանրելը բարելավում են արյան շրջանառությունը, կարգավորում ճարպագեղձերի գործառնությունը և դրանով իսկ առողջացնում մազերը:

Եթե մազերի մեջ թեփ է երևացել և մազերը ճարպոտ են, մաշկին ու մազերին քսում են հետևյալ խառնուրդը, սի պճեղ սխտորի հյութ, մեկ ձվի դեղնուց, կես թեյի գդալ մայրենեզ, երկու ճաշի գդալ մուգ թեյ: Այդ ամենը լավ խառնում են ու արորելով մերսում գլխին: Պահում են 20 րոպե, ապա խնամքով լվանում են գլուխն օձառով ու ողողում կաղնու կեղևի կամ սոխի կճեպի թունդ լուծույթով / մեկ ճաշի գդալ կաղնու կեղև՝ մեկ լիտր ջրին, եռացնել 30 րոպե կամ երկու բուռ սոխի կճեպ՝ մեկ լիտր ջրին, եռացնելով նույնքան ժամանակ /:

Նիշեք, որ կաղնու կեղևը և սոխի կճեպը փոխում են մազերի գույնը, ուստի եփուկները, կիրառելի են միայն մուգ մազերի համար:

Եթե մազերը բարակ են ու բեկուն, ապա լվանալուց 30–40 րոպե առաջ պետք է գլխամաշկի մեջ ներմերսել թարմ կաղամբի հյութ, կիտրոնի կամ սպանախի հյութ: Դա ամրացնում է մազերը և առողջ

փայլ ստալիս դրանց:

Նույնպիսի արդյունք է ստալիս նաև մազարմատները վարունգի: ու կաղամբի կամ գազարի ու կիսրոնի հյութախառնուրդներով սերսելը:

Մազաթափության դեպքում հանձնարարվում է մազարմատներին ներմերսել հազվեի հյութ: Վերջինս օժտված է կենսածին ազդակի հատկությամբ:

Կարելի է օգտվել սեկ այլ դեղատոմսից. դրա համար պետք է դեղնուց, կիսրոնահյութ և նշի կամ երիժնակի ձեթ: Երկու դեղնուցը խառնել կես կիսրոնից քանոսը հյութի հետ, ավերացնել սի քանի կաթիլ նշի կամ երիժնակի ձեթ: Այդ բուժախառնուրդը քսել գլխին և խողնել 20—30 րոպե, որ ներծծվի. հետո խնամքով ողողել սաք ջրով (ավերացրած կիսրոնահյութ կամ քացախ): Բուժարարողությունը կատարել 8 օրը սեկ:

Եղնջապակով ներմերսումը նույնպես անրացնում է մազերը, ուժեղացնում դրանց աճը և կանխապահում թևիտոմսից. 500 գ դարս եղնջի վրա լցնել 0.5 լ եռացրած ջուր, եռացնել, պաղեցնել, իսկ հետո քանել:

ԱՆՔՐԱԺԵՆՏ ՓՈՐՐԻԿ «ՄԱՆՐՈՒՆԵՆԵՐ»

Պեպեցները անենից հաճախ բերոշ են երիտառարդներին և, ինչպես հաճախացնում են շատերը, դա նրանց զարգարում է: Այդուհանդերձ, շատերը ձգտում են ազատվել պեպեցներից: Այդ խնդիրը շատ դժվար է, քանի որ պյն գունակը (պիգմենտ), որի կուտակումը պեպեցներ է գոյացնում, շատ խորն է մաշկի սակ: Ուստի և ավելի հեշտ է ինչ—որ չափով կանխել պեպեցների գոյացումը, անհրաժեշտ է դեմքը պահպանել զարնանային արևի չափից ավելի ազդեցությունից, փնտրվար անսից պետք է կանոնավոր կերպով սնուցիչ քուրք / կրեմ / քսել դեմքին և օգտագործել C վիտամին, ինչպես նաև այդ վիտամինը պարունակող սնունդ:

Գունապտերը հանվում են նույն միջոցներով, ինչ—որ պեպեցները: Մակայն այդ պտերը ավելի լավ է հանել այսպես, ջրսեռքով գերչակի ձեթը հասցնել բարձր ջերմության, դրանով սոզորել 3—4 սակ ծալած թանգիՖը,



դնել մաշկի համապատասխան

հատվածին և փաթաթել յուրաթողով ու այսպես պահել 40 րոպե: Նման մակաթաթուղիկ պետք է դնել մեկ ամիս շարունակ:

Շրթունքները կարող են թառամել, ճարճքել: Վերջինիս դեպքում դրանց քսեք մեղր, կակաոյի յուղ, վազելին, գերչակի ձեթ, փշարնովի / չիչխան / կամ մառուրի ձեթ:

Շրթունքները կղառնան հյուսեղ, եթե եռացրած տաք ջրի մեջ թայթախված ատամի խոզանակով մի րոպեի շարժ սրորեք դրանք, ապա քսեք սնուցիչ քսուք կամ կարագ: Դրանից հետո գգուշորեն, թեթևակի պրկեք ճաքակեղևը:

Աչքերն արտացոլում են մարդու ներքնաշխարհը: Փայլատ, հոգնած, պղտոր հայացքը գրիմով չես վերացնի: Աչքերի ջահել փայլը պահպանելու կօգնի աչքերի մարգանքն առավոտյան: Նամանման արդյունք են ունենում մուգ թեյի, երիցուկի կամ անանուխի / դադձի / թուրմի մեջ թայթախված խժուժով աչքերին թրջոցներ դնելը:

Կարելի է հավանգի մեջ ձեռել տերեփուկի ծաղկազյխիկներ, դրանց վրա լցնել կես լիտր վարդաջուր և մեկ ժամ եռացնել մարմանդ կրակի վրա: Կայսալիկը վերցնելուց անմիջապես հետո մեջը կաթեցնել տաք կաթիլ բորաթթու: Եփուկը քոսնել և լցնել շշի մեջ: Եթե օրական այդ բաղադրությունից 3–5 կաթիլ կաթեցվի աչքերի մեջ, դրանք կվերատանան երբեմնի փայլը:

Աչքերի տակի պարկիկները միշտ չէ, որ կիրանդության արգասիք են: Ուտի դրանց առաջանալու դեպքում անհրաժեշտ է դիմել բժշկի: Այդ պարկիկները կարող են գոյանալ ֆիզիկական ու հոգեկան լարվածությունից հետո: Այդ իսկ պատճառով նախ անհրաժեշտ է կարգավորել կենսակարգը:

Գարկիկները կվերանան, եթե դրանց վրա դնեք թանգիֆե անձեռոցիկի մեջ փաթաթած քերած կարտոֆիլ կամ վարունգ: Կարելի է սառը կայծով թրջոցներ դնել: Կարելի է նաև թանգիֆե փոքր սուպրակներով վարդի, մառենու չորացած ծաղկաթերթերի, սամիթի կամ մաղաղանուի տերեուկների պաշար տեսնել: Նարկեղած պահին տոպրակները ընկղմել սաք ջրի մեջ և ապա, տանելիորեն, սաք տոպրակը դնել աչքերին:

Թարթիչները խիտ ու երկար կղառնան, եթե ամեն երեկո մի քանի անգամ թեթևակի դրանց գերչակի ձեթ քսեք վրձնիկով: Լավ արդյունք կարելի է ստանալ նույն արարողությունն անելով տաք գրամ վազելին, յոթ գրամ գերչակի ձեթ և 0.2 գրամ աղաղ / տանին / պարունակող խառնուրդով:

Կնոջ պարանոցը միշտ իր վրա կրում է ապրած սարիների դրոշմը: Անհրաժեշտ է ավելի հստակ թեթևակի սնուցիչ քսուքով մերսել այն:

Մի բուռ թարմ բույսերի՝ մաղաղանուի, ավելուկի, թարխունի, հագրեվարդի / խնկունու / վրա եռացող

կաթ լցնել: Մի որոշ ժամանակ անց կայծով սոզորված բուսախառնուրդը սեղավորել խիտ գործվածքի վրա, որպեսզի կայծով ներծծված բույսերը թրջոցուկ դառնան 10—15 բույս: Այնուհետև օղալոգանք անել: Պարանոցը լվանալ չի կարելի: Պարանոցը պատել սնուցիչ քսուրով / կրեմով / :

Բուսաթրջոցներ կարելի է անել վարունգի կեղևով, որը դնում են պարանոցի երկարությամբ և փայթաթում խիտ կտավով:

Կնոջ ձեռքերը նրա ոչ միայն սպրած տարիների կնիքն են կրում, այլև սնտեստիու աշխատանքի հետքերը: Խաշած կրպած կարսոֆիլը սրտրել կաթի մեջ և այդ շիպյանման զանգվածի վրա ավելացնել 10 կաթիլ գերչակի ձեթ: Այդ խյուսը քսել կտորին և սառնելի տաք վիճակում փայթաթել ձեռքերին ու պահել մինչև դրա պաղելը:

Եթե ձեռքերը կարմրում են, ապա արդյունավետ միջոց են ծովային աղով տաք լոգանքները: Լոգանքից հետո ձեռքերին բրդաճարպ / լանոլին / են քսում:


Արմուկները կարող են եղջրանալ: Նման դեպքում պետք է երկու ամսանի մեջ լցնել ջրանեղով սաքսցրած ձեթ և 10—20 բույս յարմունկները ընկզմել դրանց մեջ:

ԻՆՉՊԵՍ ԱՋԱՏՎԵԼ ՊՉՈՒԿՆԵՐԻՑ

Դա լուրջ հիվանդություն է, որի բուժումը պետք է իրականացնել բժշկի ցուցումով, քանի որ պզուկներին (շիտ, շտիկ, սալորիկ, պալարիկ, ուաիլ) անգիստրեն դիպչելը և դրանք եղունգներով սեղմելը կարող են վարակի ներթափանցման և բշտիկների ավելացման պատճառ հանդիսանալ: Եթե հիվանդությունը թեթև բնույթ ունի, կարելի է դիմել դիմահարդարի:

Մերսման՝ որպես պզուկների դեմ պայքարի եղանակի հարցում մասնագետները՝ տարակարծիք են: Ոմանք դա ազդու միջոց են համարում, մյուսներն ընդհակառակն՝ վնասակար:

Որոշակիորեն պարզված է, որ սնուղն պատասնեկան տարիքում պզուկների առաջացման պատճառ չի հանդիսանում: Բայց, այդուհանդերձ, այդ հիվանդության դեպքում խորհուրդ է տրվում խուսափել պահածոներից, ճարպերով ու ածխաջրատներով հարուստ սնունդից, ինչպես նաև շոկոլադից:



սրճից ու ծխախոտից:

Բուժման եղանակները

Խմորիչներ: Սա աղստոված մաշկի դեմ պայքարելու հիմն. տնական միջոց է: Օրական երկու անգամ, ամենից լավ է առավոտյան ու երեկոյան, պեսք է ուտել մի կտոր խմորիչ՝ պնդուկի մեծությամբ: Բացի այդ, շաքարակաճ երկու անգամ անհրաժեշտ է խմորիչով դիմակ դնել: Բուժման տևողությունը պեսք է լինի անընկալ 4–6 շաբաթ:

